



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

N 45 - Ա
26 դեկտեմբերի 2013 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30 - Ի N 68 - Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին, 5-րդ մասերի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով
կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2009 թվականի հոկտեմբերի 30-ի «Մարզային հանձնաժողով ստեղծելու մասին» N 68-Ա կարգադրության մեջ կատարել փոփոխություն՝ կարգադրության 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրելու համար անհրաժեշտ եզրակացություն տրամադրելու նպատակով ստեղծել մարզային հանձնաժողով հետևյալ կազմով՝

- | | |
|-----------------|---|
| Գրիգորյան Ռ. | – մարզպետ, հանձնաժողովի նախագահ |
| Հովհաննիսյան Վ. | – մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ |
| Ստեփանյան Է. | – մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչ |
| Սողոմոնյան Ս. | – ՀՀ բնապահպանության նախարարության բնապահպանական պետական տեսչության Գեղարքունիքի տարածքային բաժնի պետ /համաձայնությամբ/ |
| Մելքոնյան Ս. | – ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Գեղարքունիքի գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն» ՓԲԸ տնօրեն /համաձայնությամբ/ |
| Բարսեղյան Ա. | – ՀՀ կառավարությանն առընթեր ԱԳԿ պետական կոմիտեի Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման ղեկավարի տեղակալ /համաձայնությամբ/ |

Իսախանյան Մ.

- ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի <<Գավառ>> ԶՕԸ-ի գործադիր տնօրեն /համաձայնությամբ/

Համապատասխան համայնքի ղեկավարը /համաձայնությամբ/

Համապատասխան համայնքի գյուղատնտեսության գծով մասնագետը /համաձայնությամբ>>:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝



Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ